

Թիֆլիսահայ գործարարներ. Ալեքսանդր Մանթաշյանց, Միքայել Արամյանց

Եսայան Վ. Բ.

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ (Հայաստան, Երևան)

vardanesayan@yahoo.com

Վճռորոշ քառեր՝ տնտեսական գործունեություն, քաղաքական իրավիճակ, ազգասեր, բարերար, տնտեսական տարածք, դրամագլուխ, միլիոնատեր

Тифлиские армянские бизнесмены: Александр Манташянц, Микаел Арамянц

Есаян В.Б.

Институт истории НАН РА (Армения, Ереван)

vardanesayan@yahoo.com

Резюме: В конце 19-го и начале 20-го веков в ряде отраслей экономики и торговли Тифлисской губернии главенствующие позиции занимали армяне. Одним из них являлся основатель армянского классического капитализма и создатель культуры капитала в армянской действительности Александр Манташянц. Этот умный и успешный бизнесмен достиг больших успехов особенно в нефтедобыче и банковской сфере, который стал одним из богатейших армян своего времени.

Одним из видных деятелей деловых кругов тифлисских армян был также близких друг и партнер А. Манташянца Микаел Арамянц. Накопив определенный капитал в Тавризе, этот талантливый бизнесмен переехал в Тифлис и развернул успешную экономическую деятельность. Накопленный в нефтедобыче капитал он вкладывал в строительство и в недвижимость. А. Манташянц и М. Арамянц особое внимание уделяли благотворительной деятельности, они спонсировали обучение армянской молодежи в высших учебных заведениях.

Ключевые слова: экономическая деятельность, политическая ситуация, патриот, благотворитель, экономическое пространство, капитал, миллионер

Tiflis Armenian businessmen: Alexander Mantashyants, Mikael Aramyants

Esayan V.B.

Institute of history of NAS RA (Armenia, Yerevan)

vardanesayan@yahoo.com

Abstract: At the end of the 19th and the beginning of the 20th centuries, in a number of sectors of the economy and trade of the Tiflis province the Armenians occupied the leading positions. One of them was the founder of Armenian classical capitalism and the creator of the culture of capital in Armenian reality, Alexander Mantashyants. This smart and successful businessman has achieved great success especially in the oil production and banking sector, which has become one of the richest Armenians of his time.

Mikael Aramyants, a close friend and partner of A. Mantashyants, was also one of the prominent figures of the Tiflis Armenian business circles. Having accumulated a certain capital in Tabriz, this talented businessman moved to Tiflis and launched a successful economic activity. Accumulated capital in oil production, he invested in construction and real estate. A. Mantashyants and M. Aramyants paid special attention to charitable activities, they sponsored the training of Armenian youth in institutions of higher education.

Keywords: economic activity, political situation, patriot, philanthropist, economic space, capital, millionaire

Թիֆլիսի նահանգում՝ ինչպես տնտեսության մի շարք ճյուղերում այնպես էլ առևտրի բնագավառում, գերիշխող դիրք էին զբաղում հայերը: Դրանցից մեկը նշանավոր հայ գործարար, հետագայում «Անդրկովկասի թիվ 1 ֆինանսիստ»¹ և «նավթի արքա», ժամանակի

ամենահարուստ մարդկանցից Ալեքսանդր Մանթաշյանցն էր²:

գրությունների հեղինակ **Խաչատուր Դադայան**, Ե., 2011, էջ 10:

² Ես գրում եմ Մանթաշեանց,-նշանավոր մեծահարուստին նվիրված իր հուշերում բացատրում է դրանց հեղինակ Ա. Սարուխանը,- որովհետև ինքն իր անունը հայերեն ստորագրում էր այդպես: Տե՛ս **Սարուխան Ա.**, Ալեքսանդր Մանթաշեանց. մեծ վաճառականը և բարե-

¹ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթա-

Ալեքսանդրի հայրը՝ Հովհաննեսը³ (նա ուներ երկու երեխա՝ Ալեքսանդրը և քույրը՝ ապագա տիկին Միրիմանյանը) ժամանակին մեկնել էր Պարսկաստանում մեծ հեղինակություն վայելող քեռու՝ Խոսրով խանի (Ղայթմազյանց) մոտ, նրա հովանավորությամբ զբաղվել մանուֆակտուրայի (խամխալաթի) առևտրով և իր աշխատասիրության ու գործիմացության շնորհիվ հասել զգալի հաջողությունների: Հովհաննեսը մեծ հոգատարությամբ էր վերաբերվում որդու կրթության հարցերին: Ալեքսանդրը սովորել է վարդապետ Գ. Փափազյանի մասնավոր դպրոցում, որտեղ ստացել է հիմնավոր կրթություն: Այստեղ էլ հավանաբար, կարդում ենք «Մշակ» լրագրում, «ձեռնավորվել է Մանթաշեանցի ազգասեր և կրօնասեր պահուստը»⁴:

Ալ. Մանթաշեանցի մանուֆակտուրայի առևտրով զբաղվող հայրը գործի բերումով հաճախ էր լինում Եվրոպայում: Դրանցից մեկի ժամանակ, 1868 թ., նա իր հետ տանում է նաև որդուն: Նրանք միասին շրջում են Եվրոպական մայրաքաղաքներում և կարողանում առևտրական լայն կապեր հաստատել մի շարք քաղաքների վաճառական տների հետ: Մակայն մինչ այդ էլ՝ 1866 թ. 24 տարեկան երիտասարդ Ալեքսանդրն արդեն եղել էր Եվրոպայում և գտնվելով տեքստիլ արդյունաբերության եվրոպական խոշոր կենտրոններից մեկում՝ Մանչեստրում, մանուֆակտուրա էր գնում և առաքում Թիֆլիս՝ հորը: Ի դեպ, հենց այստեղ՝ Մանչեստրում Ալ. Մանթաշեանցն առաջին անգամ առնչվեց բարերարություն երևույթին, որը ուղեկցեց նրան ամբողջ կյանքում՝ պարզևեղով համաժողովրդական հարգանք ու երախտագիտություն:

Մանչեստրում հայտնվելը նրա համար ճակատագրական նշանակություն ունեցավ: Այդ միջավայրում գործունեություն իրականացնելով Մանթաշեանցն առնչվեց եվրոպական նիստուկացի և մշակույթի հետ: Ձեռք բերեց բիզնես վարելու առաջավոր գործնական անգնահատելի փորձառություն և այդ

գործը, յուշեր իր մահվան 20-ամեակի առթիւ, Վիեննա, 1931, էջ 3:

³ Հովհաննեսը սերում էր կրոնական հնագույն ընտանիքից, իսկ մայրը՝ վրաստանի հին ազնվական հայ գերդաստանից էր, տե՛ս **Շերմազանեան Գ.**, նիթեր ազգային պատմության համար, Ռոստով, 1891, էջ 213:

⁴ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911, թիվ 4:

«թանկարժեք ուղեբեռով վերադարձավ Թիֆլիս»⁵: 1878 թ. Թիֆլիսի «Կավկաս» հյուրանոցի առաջին հարկում նա խանութ բացեց և հոր հետ սկսեցին զբաղվել մանուֆակտուրայի մանրամեծածախ առևտրով: Աշխատասիրության և ճշգրիտ հաշվարկների ու բիզնեսը խելացի կառավարելու շնորհիվ նրանք շարունակաբար հաջողություններ արձանագրեցին և տարեց-տարի ավելացրեցին իրենց դրամագլուխը:

Հայկական դասական կապիտալիզմի հիմնադիրներից և հայ իրականության մեջ կապիտալի մշակույթի կերտողներից Ալեքսանդր Մանթաշեանցը⁶ հոր մահից հետո 20 հազար ռուբլի⁷ ժառանգություն ստանալով հետագայում ոչ միայն իր դրամագլուխը հասցրեց միլիոնների⁸, այլև իր իսկ կենդանության ժամանակ համաշխարհային համբավ ձեռք բերեց և իր գործունեությամբ «լիարձակ կերպով մարդկությանը հայտնի դարձրեց հային»⁹:

Ինչպես իրավամբ միաբերան նշում են նրա մասին գրող բոլոր ժամանակակիցները,

⁵ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշեանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթագրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 14:

⁶ (1842, մարտի 3-1911, ապրիլի 19: Վախճանվել է Պետերբուրգում, հուղարկվորվել է Թիֆլիսի Վանքի եկեղեցու բակում կառուցած դամբանում՝ կնոջ կողքին: 1938 թ. թե Վանքի եկեղեցին և թե դամբանը ավերվել են: Ըստ որոշ լուրերի, նրա ու կնոջ աճյունները գաղտագողի փոխադրվել ու հողին են հանձնվել Թբիլիսիի Սբ Գևորգ եկեղեցու բակում): Տե՛ս <http://www.irates.am/hy/1488528993>:

⁷ Այս թվի վերաբերյալ Մանթաշեանցին նվիրված գրքի հեղինակ Խ. Դադայանը տրամաբանված և միանգակայն իրատեսական հետևյալ դիտարկումն է արել. <20 000 ռուբլի-Ա. Մարուխանի բնագրում 200.000 ռուբլի է, բայց փոխել ենք 20. 000-ի հետևյալ պատճառով: 200.000 ռուբլի գումարն առաջին անգամ «Մշակ» օրաթերթում, հենց Մարուխանի հոդվածաշարում և պարզագույն սրբագրական վրիպակ է, որն անքննադատաբար շարունակվել է շրջանառվել հետագա հրատարակություններում: Պետք է լինի 20.000 ռուբլի. բանն այն է, որ 1880-ական Թիֆլիսի ամենահարուստ մարդը Հովհ. Չիթախյանն էր, որի ունեցվածքը կազմում էր շուրջ 25.000 ռ.: Հետևաբար Հովհ. Մանթաշեանցը, որ սեփական տուն չուներ և վարձով էր ապրում, որդուն չէր կարող 200.000 ռ. կարողություն թողնել: Տե՛ս Ալեքսանդր Մանթաշեանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթագրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 87:

⁸ Ա. Մանթաշեանի կարողությունը ժամանակակիցների վկայությամբ 1920-ական թթ. կազմում էր 25-30 միլիոն ռուբլի:

⁹ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշեանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթագրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 9:

բնավորությամբ անհանգիստ և պրպտող մտքի տեր Ալեքսանդրը չէր կարող բավարարվել վաճառականությամբ և այդ ասպարեզում կուտակած փողերը նա ներդրեց ֆինանսական ոլորտ: Ինչպես վկայում է Ալ. Մանթաշյանցի կենսագիր-ուսումնասիրողներից Խ. Դադայանը, «Թիֆլիսի պաշտոնական աղբյուրներում Մանթաշյանցն առաջին անգամ հիշատակվում է 1873-ին»¹⁰, հենց որպես երկու տարի առաջ ստեղծված Փոխադարձ վարկի ընկերության վարչության անդամ¹¹:

1881 թվականից քաղաքային դումայի պատգամավոր և Թիֆլիսի վաճառական գիլդայի անդամ Ա. Մանթաշյանցը 1882-1884 թթ. ընտրվեց դեռևս 1871 թ. հիմնադրված «Թիֆլիսի առևտրային բանկի» (Тифлисский коммерческий банк) վարչության անդամ¹²: 1885-1889 թթ. էլ դարձավ վարչության փոխնախագահ, իսկ 1890 թվականից մինչև կյանքի վերջ՝ նախագահ: Միաժամանակ նա այդ բանկի ամենախոշոր բաժնետերն էր: Վստահաբար կարելի արձանագրել, որ հիմնականում Ալ. Մանթաշյանցի խելացի, հավասարակշռված, բնագավառի նրբություններին տիրապետելու և հետևողական աշխատանքի շնորհիվ այդ դրամատունը վերածվեց Ռուսական կայսրության ֆինանսական հաստատություններից մեկի և համարվում էր կայսրության բորսայական արժեք: Բանկ, որն իր «գործունեությունն սկսելով 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով 1914 թ. ուներ 6 մլն ռուբլի հիմնադիր ու

3,8 մլն ռուբլի պահուստային կապիտալ»¹³ և կովկասյան միակ ֆինանսական հաստատությունն էր, որի բաժնետոմսերը վաճառվում էին Պետերբուրգի սակարանում:

1909 թ. վիճակագրական արդյունքներով Ռուսական կայսրության ամենահարուստ մարդկանց ցանկում 13-րդ տեղը զբաղեցնող Ալ. Մանթաշյանցը խոշոր վաճառական էր, նա իրեն գործարանատեր չէր համարում և իր բոլոր առևտրական գործերը վարում էր ինքն անձամբ: Նա հետևում էր հայ վաճառականության ավանդույթներին և ինքն էլ վաճառականներին ավադում էր, որ «վաճառականների փառքի տունը իրենց տառապյալ հայրենիքն է»¹⁴:

Հաջողակ առևտրական և Այսրկովկասի ամենահզոր ֆինանսիստ ու ամենամեծ դրամատան փաստացի սեփականատեր Ալ. Մանթաշյանցը նույն հետևողականությամբ շարունակում էր զբաղվել սիրած գործով՝ մանուֆակտուրայի առևտրով, որը սակայն այլևս չէր բավարարում հաջողակ գործարարին: Իր հերթին խոշոր ֆինանսական միջոցները պահանջում էին գործունեության նոր ոլորտ: Պատեհ առիթն էլ ներկայացել էր՝ 1885 թ. Բաքվից Թիֆլիս էր ժամանել մեկ այլ հաջողակ հայ գործարար Միքայել Արամյանցը և առաջարկել զբաղվել նավթարդյունաբերությամբ:

1899 թվականին՝ ընդառաջելով Մ. Արամյանցի հորդորներին, նա հիմնադրեց «Ալեքսանդր Մանթաշև և Կո» նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը¹⁵, որը Ալ. Մանթաշյանցի տքնաջան աշխատանքի, բնածին խելքի, շրջահայեցության և ձեռներեցության շնորհիվ 20-րդ դարի սկզբին արդեն արդյունահանում և արտահանում էր Բաքվի նավթի 1/3-ը: Ընկերության նավթի առևտրական տներն ու նրանց մասնաճյուղերը տարածվում էին ամբողջ աշխարհում, իսկ Մանթաշյանցը համարվում էր Ռուսական կայսրության ամենահարուստ մարդկանցից մեկը: 1899-1909 թթ. նրա ընկերությունն իր հիմնական դրամագլխի ծավալով (22 միլիոն ռուբ-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

¹¹ Այդ ընկերության ժամանակավոր նախագահն էր Վ. Կայդանովը, անդամներ՝ Ալ. Մանթաշյանցը, Ս Ջաղելին, Ալ. Մատինյանը, Հովհ. Չիթախյանը, իսկ կառավարիչն էր Կովկասում Գ.Գ.Աղիլխանյանի կազմի և թաղիքի արտադրության բաժնետիրական ընկերության» սեփականատեր Գ. Աղեյխանյանը: Տե՛ս Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրատարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթագրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 14:

¹² Այդ բանկի հիմնադիրներն էին ժամանակի այնպիսի խոշոր վաճառականներ, ձեռնարկատերեր և կալվածատերեր, ինչպիսիք էին Մ. Ալիխանյանը, Հ. Ամիրադյանը, Դ. Նադիրյանը, Մ. Թամամշյանը, Ա.Ղորղանյանը, Ալ. Թայլիբյանը, Խ. Տեր-Մկրտչյանը, Ալ. Օսիկյանը, Է. Էջուբյանը, Ս. և Հ. Իզմիրյան եղբայրները, Հ. Եվանգուլյանը, Ե. Ջաղեթյանը, Մ. Շահպարտյանը, իշխաններ Ն. Բեկթաշբեկովը և Պ. Նակաշիձեն, բարձրաստիճան պաշտոնյաներ Բ. Ջուրաբովն ու Կ. Ռեյտերը և այլ նշանավոր անձինք: Տե՛ս Устав Тифлисского коммерческого банка, Тиф., 1894. Տե՛ս նաև Устав Тифлисского общества взаимного кредита, Тиф., 1872.

¹³ Տե՛ս ' Устав Тифлисского купеческого банка, Тиф., 1913.

¹⁴ Տե՛ս «Հովիտ», 1911, թիվ 18:

¹⁵ Տե՛ս Монополистический капитал в нефтяной промышленности России 1883-1914, Документы и материалы, М.-Л, 1961, с. 231-233. Ֆիրմայի գլխավոր գրասենյակը Թիֆլիսում էր, Ֆրեյլինսկայա թողոցում գտնվող Բայազադովի տանը:

լի) ամենախոշորն էր ռուսական արդյունաբերության մեջ: 1904 թ. Բաքվի նավթի արդյունահանման ծավալով նա զիջում էր միայն «Նոբել եղբայրներ»-ին և Ռոտշիլդ եղբայրների «Կասպիական սևծովյան ընկերությանը»¹⁶:

Մանթաշյանը ֆինանսավորել է Բաքու-Բաթում նավթամուղի շինարարությունն ու 1907 թ. կառուցել աշխարհում առաջին 835 մ երկարություն ունեցող նավթամուղը: Նա ուներ նաև հանքեր, գործարաններ, կավածքներ, տներ, հյուրանոցներ, ամառանոցներ ու շոգենավեր: Նրան ճանաչում և «նրա կարծիքի հետ հաշվի էին նստում ամենաբարձր ոլորտներում»¹⁷: Մակայն այդ ամենին նա հասել էր դժվարին ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Հատկանշական է, որ նրա մասին բոլոր գրողները միաբերան պնդում են, որ ինչ նա ձեռնարկում էր, կատարում էր փայլուն կերպով, հետևողական էր և գործն անպայման պետք է հասցներ իր տրամաբանական ավարտին: Միաժամանակ զգույշ էր, շրջահայաց և սկզբունքային¹⁸:

Մանթաշյանցի կյանքի գլխավոր նպատակը միայն առևտուրն ու դրամ դիզելը չէին: Գործարարությանը զուգընթաց՝ նա կարևորում էր նաև ազգագուտ հասարակական աշխատանքներ կատարել: Նա հովանավորում էր Կովկասի ամենախոշոր որբանոցը, նրա միջոցներով շենքեր և հայկական եկեղեցիներ են կառուցվել Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում ու Փարիզում: Հայկական Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որը գտնվում է Փարիզի հենց կենտրոնում՝ Ելիսեյան դաշտում, իր գոյությամբ պարտական է նրան:

Ալ. Մանթաշյանը եղել է նաև հայ մշակույթի, գիտության, արվեստի և գրականության մեծ նվիրյալ ու հովանավոր: 1881 թվականից սկսած՝ նա իր միջոցներով տարեկան 200 ուսանող-որդեգիր էր պահում, որոնք սովորում էին Ռուսաստանի և Եվրոպայի լավագույն ուսումնական հաստատություններում: Նրանցից շատերը հետագայում դարձան գիտության, մշակույթի, արվեստի և գրակա-

նության հայտնի գործիչներ¹⁹: Ալ. Մանթաշյանցին բնորոշ էր այն, որ նա մասնագետների ընտրությունը կատարում էր առաջին հերթին գնահատելով տվյալ անձնավորության մարդկային արժանիքները՝ ազնվությունը, ճշտապահությունը և պարտաճանաչությունը: Մի կարևոր հատկանիշ էլ էր հատուկ անվանի գործարարին: Նրա բոլոր կարևորագույն գործերը, նյութական հաշիվների կատարողները, գանձապահները, արտադրության ղեկավարներն ու հսկիչները, աշխարհով մեկ սփռված նրա առևտրական գրասենյակի ղեկավարները՝ որպես կանոն ազգությամբ հայեր էին²⁰: Ալ. Մանթաշյանցի ժամանակակիցներից հայ նշանավոր գրող Շիրվանզադեն իրավացիորեն գրել է. «...Միրտը՝ ահա գլխավորը, որ կատարում էր միակ դերը եւ վեհ դերը Մանթաշեանցի բարեգործությունների մեջ: Նա տալիս էր՝ առանց ետին հաշիւների, առանց գաղտնի մտածումների, առանց սին փառամուտութեան: Տալիս էր, որովհետեւ այդպէս էր թելադրում նրա զգայուն հոգին»²¹: Բնութագրական է նաև այն, որ այդ ծով հարստության տեր և բազմազավակ Մանթաշյանը²² չէր սիրում ի ցույց դնել իր ունեցվածքը և ապրում էր բավականին համեստ կյանքով: Մինչև 1920-ական թթ. բոլոր ժամանակների ամենահարուստ հայ ունեւերը վախճանվեց երիկանների հիվանդությունից Ս. Պետերբուրգում է 1911 թ.:

Թիֆլիսի հայ գործարար աշխարհի կարևոր դերակատարներից էր նաև Ալեքսանդր Մանթաշյանցի մտերիմ ընկեր ու գործընկեր **Միքայել Արամյանը** (1843 թ. մայիսի 4, Լեռնային Ղարաբաղ, գյուղ Քյաթուկ – 1924 թ., Թիֆլիս): Ավարտելով տեղի ծխական դպրոցը՝ 1858 թվականին 15-ամյա Միքայելը զավառական ուսումնարանում սովորելու նպատակով հարազատ արցախյան գյուղից մեկնեց Շուշի:

¹⁹ Տե՛ս *Ավետիսյան Գ., Միրված գործարարը. <http://www.magaghat.am/archives/49064>*

²⁰ Օրինակ՝ 1922 թ. Ընկերության Բեյրութի մասնաճյուղի տնօրեն էր նշանակվել հայ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաներից Միհրան Տամատյանը: Տե՛ս Իփեկեան-Ազատեան ն., Հուշեր Միհրան Տամատյանի մասին, Ե., 2018, էջ 10:

²¹ Բաղդասարյան Ս., Ալեքսանդր Մանթաշյան, Հայերն այսօր ամսագիր, 24.11.2013

²² Ալ. Մանթաշյանցն ուներ ութ զավակ՝ 4 աղջիկ և 4 տղա: Ծանր տանելով 1910 թ. կնոջ կորուստը՝ 1911թ. զարնան ինքն էլ կնքեց իր մահկանացուն:

¹⁶ Տե՛ս Монополистический капитал в нефтяной промышленности России 1883-1914, Документы и материалы, М.-Л, 1961, с. 177, 679.

¹⁷ Տե՛ս Բալագյան Լ., Ալեքսանդր Մանթաշյանց (Ազգային բարերարը և գեղարվեստի մեկենասը), Ե., 1991, էջ 18-19:

¹⁸ Տե՛ս «Հորիզոն», 1911 թ., թիվ 82:

Նրան դեռ մանկությունից ավելի շատ հրապուրում էր Թիֆլիսը և քիչ էր մնում, որ իրականանար Թիֆլիսում կրթությունը շարունակելու նրա երազանքը: Մակայն կյանք նրա համար այլ ուղի էր նախատեսել²³:

Գեռնս 15 տարեկան հասակում Միքայելի մոտ ակնհայտ դարձավ առևտրի նկատմամբ հակումը: Գործի մեջ հմտանալու և գիտելիքներ ձեռք բերելու համար ծնողները նրան որպես օգնական ուղարկում են Իրանի Թավրիզ քաղաքի հայտնի առևտրական Թարումանյանի մոտ աշխատելու: Վերջինս առևտրական գործունեություն էր իրականացնում Իրանում, Ղարաբաղում և արտասահմանյան մի քանի երկրներում: Կարճ ժամանակում Արամյանցն այնպիսի տաղանդ է ցուցաբերում, որ նրան նշանակում են «Գործընկերություն» մասնավոր ընկերության ներկայացուցիչը Թավրիզում: Այստեղ էլ չորս տարի աշխատելու ընթացքում Միքայելը կուտակում է իր առաջին կապիտալը՝ շուրջ 3000 մանաթ: Այն ժամանակ սա արդեն բավականին մեծ կարողություն էր համարվում²⁴:

Չենց այդ սկզբնական կապիտալով, 1871 թ. Արամյանցը մեկնեց և բնակություն հաստատեց Այսրկովկասի փաստացի կենտրոն, իր համար դեռ փոքր տարիքից երազանքի Թիֆլիս քաղաք՝ սեփական գործունեություն ծավալելու նպատակով: Քրտնաջան և սիրած գործին մինչև վերջ նվիրված աշխատանքի շնորհիվ, 28 տարեկան հասակում Միքայել Արամյանցն արդեն ուներ իր առաջին միլիոնը: Վաստակած այս դրամագլխով, Արամյանցն ավելի ընդարձակեց իր բիզնեսը: Նա զբաղվում էր մանվածքաթելի, բրդի, գործվածքների, մետաքսի, բամբակի առևտրով:

²³ Այնպես է ստացվել, որ Վահե Անթանեսյանի «Միքայել Արամյանց. կյանքի եւ գործունեության դրվագներ» (Ե., 2013) գրքուկից, ցայսօր մեծ գործարար է բարերար Միքայել Արամյանցի մասին որևէ ուսումնասիրություն չունենք: Թեև Վ. Անթանեսյանը՝ օգտագործել է արխիվային նյութեր, դիմել կենսագիրներին, մասնավորապես՝ Գրիգոր ավագ քահանա Մանդակունու «Ոսկի բարեկամ հայ ընտանեաց» աշխատությանը, ժամանակի մամուլին, սակայն շատ ժլատ տեղեկություններ է ձեռք բերել, քանի որ այն ժամանակ չգրված սկզբունք է գործել՝ չբարձրաձայնել, չթմրկահարել բարեգործությունը, այլ հնարավորինս աննկատ մնալ:

²⁴ Այս գումարի իրական արժեքը հասկանալու համար նշենք, որ այդ ժամանակ լավ ցեղատեսակի կովն արժեր 3 մանաթ, այսինքն՝ նա ուներ հազար կով ունենալու հնարավորություն:

Ներգրավված էր նաև Մարսելի, Թավրիզի ու Թեհրանի միջև շաքարավազի տարանցիկ առևտրում: Բացի այդ, նա տնօրինում էր պատկառելի թվով անշարժ գույք: Մ. Արամյանցի ղեկավարության տակ էին գտնվում վարձով տներ, կալվածատներ, ամառանոցներ և պանսիոնատներ, Ախթալայում և Կիսլովոդսկում գտնվող բուժիչ հանքային ջրերի աղբյուրներ:

Արամյանցը ֆինանսավորում էր քաղաքի մի շարք խոշոր և կարևոր շենքերի շինարարությունը: Նախևառաջ դա «Մաժեստիկ» հյուրանոցն էր և հիվանդանոցը, որոնք մինչ օրս նրա անունով են կոչվում: Չհաջված բարեգործությունը՝ Արամյանցն արդեն բազմամիլիոնանոց կարողություն ուներ և հասարակության բարօրություն համար երբեք չէր տնտեսում: Արամյանցի անվան հետ է կապված նաև Թբիլիսիի «Մարիոտ» հյուրանոցը, որը նա կառուցել է իր սիրելի նավի՝ «Մաժեստիկի» նմանությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նաև ապաստաններ է կառուցել հայ գաղթականների համար²⁵:

Մակայն 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի հայ նավթարդյունաբերող, բարերար, Թիֆլիսի «Ազգային բարեգործական ընկերության» հիմնադիր վաճառականի իրական մեծ հարստությունը ձևավորվեց նավթարդյունաբերության ոլորտում ներգրավվելուց հետո: Նա առաջիններից էր, որ իր կապիտալի մեծ մասը տեղափոխեց Բաքու՝ նավթը երկաթուղով, ցիստեռններով տեղափոխելու համար: Ընդհանուր առմամբ, Մ. Արամյանցի դերը մեծ է եղել Կովկասում նավթարդյունաբերության զարգացման գործում: Ըմբռնելով, որ Բաքվի նավթը իսկական ոսկու երակ է՝ նա դարաբաղցի իր երկու ընկերների՝ Առաքել Ծատուրյանի ու Գերասիմ Թումայանի հետ հիմնում է «Բալախանսկայա» նավթարդյունաբերական ընկերությունը: Մակայն չդիմանալով ռուսական և ամերիկյան նավթային հսկաների՝ Նոբելի և Ռոտշիլդների մրցակցությանը, Արամյանցն իր վաղեմի ընկերոջը՝ Մանթաշյանցին, ով այդ ժամանակ

²⁵ Կյանքի որոշ դրվագների նկարագրությամբ վրացական «gza.ambebi.ge» կայքը վերջերս ծավալուն հոդված է հրապարակել 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Թբիլիսիում բնակված Միքայել Արամյանց հայազգի հայտնի բարերարի ու մեկենասի մասին: St'u«gza.ambebi.ge»:

արդեն Թիֆլիսի Կոմերցիոն բանկի սեփակա- նատերն էր, առաջարկում է միանալ իրենց:

Մանթաշյանը, որ մինչ այդ արդեն հետա- քրքրված էր նավթի բիզնեսով, համաձայնում է ու ոչ միայն 50 հազար ռուբլի ներդրում է կատարում, այլև իր բանկում վարկային ար- տոնյալ գիծ է տրամադրում, որի շնորհիվ մի քանի տարի անց ընկերությունը միլիոններ է վաստակում՝ նախ նավթը երկաթուղային ցիս- տեռններով արտասահման տեղափոխելու, ապա՝ Բաքվում կառուցված առաջին նավթա- մուղի շնորհիվ, որը Բաքվի նավթը Բաթումով տեղափոխում էր Եվրոպա ու Հնդկաստան: Կարճ ժամանակ անց Մանթաշյանը կարո- ղանում է գնել Առաքել Ծատուրյանի ու Գե- րասիմ Թումայանի բաժնեմասերը և նրանք Արամյանցի հետ մնում են գործընկերներ, Մանթաշյանը 3/4, Արամյանցը՝ 1/4 բաժնե- մասերով²⁶: Սակայն շատ չանցած, ընտանե- կան խնդիրների պատճառով Արամյանցը, 14 տարի Բաքվում ապրելուց հետո, վաճառում է իր մասնաբաժինը Մանթաշյանցին և վերա- դառնում Թիֆլիս:

«Փողերը վերջանում են, փառքը՝ նույն- պես: Սակայն Հայաստանը մեր միակն է: Մի մոռացեք այդ մասին: Արարեք հանուն ձեր երկրի ու նրա ժողովրդի երջանկության»²⁷, - սիրում էր կրկնել Միքայել Արամյանցն ու ինքն էլ ապրում էր այդ նույն սկզբունքով: Հայրական տան վաճառքից ստացած 45 հա- զար ռուբլին հիմնադրման 70-ամյակի կա- պակցությամբ նա նվիրաբերեց Շուշիի ծխա- կան դպրոցին²⁸: Այդ առաջին քայլից հետո, նա հետագա ամբողջ կյանքն ապրեց բարեգոր- ծություններ կատարելով:

1897 թ. Արամյանցը փորձեց Մանթաշյան- ցին համոզել, որ արտաքին առևտրից էլ իրեն մասնաբաժին տա, սակայն կտրուկ դիմակա- յության հանդիպելով ի վերջո զիջեց և նրանց միջև կնքվեց նոր պայմանագիր: Համաձայն այդ պայմանագրի նրանք շարունակեցին

նավթային բիզնեսը 4/5-րդ մասը Մանթաշյան- ցին, իսկ 1/5-րդը՝ Արամյանցին հարաբերակ- ցությամբ²⁹:

Վերադառնալով Թիֆլիս՝ Արամյանցը գոր- ծարարությամբ այլևս չի զբաղվում: Ապրում է իր կապիտալի տոկոսներից, հյուրանոցային և այլ բիզնեսներից ստացվող եկամուտներով: Նա եկամտաբեր տների, կավածքների, ամա- ռանոցների ու հանգստավայրերի, հատկա- պես՝ Ախթալայի և Կիսլովոդսկի բուժիչ հան- քավայրերի տերն ու տնօրենն էր: Արամյանցը վայելում էր կյանքը և իր բարեգործության արդյունքները՝ ժողովրդի անսահման սերն ու հարգանքը: Մարդասիրական այս արարքով Արամյանցը ոչնչով հետ չէր մնում իր բարե- կամ Մանթաշյանցից: Վերջինիս նման Արամ- յանցն էլ գտնում, որ ուսանողը հայ ազգի ապագան է և այդ սկզբունքով առաջնորդվելով շուրջ հիսուն տարի, այսինքն՝ իր առևտրային գործունեության ողջ տևողության ընթացքում: Նա կարիքավոր հայ պատանիներին լիառատ օգնում ու հնարավորություն էր ընձեռում բարձրագույն կրթություն ստանալու, որպեսզի իրենց ապագան ապահովեն և օգտակար լինեն սեփական ժողովրդին:

Բիզնեսում հաջողակ Մ. Արամյանցը սա- կայն ընտանեկան կյանքում այնքան էլ երջա- նիկ չէրավ: Բաքվի 1-ին գիլդիայի վաճառա- կան, մեծ համբավ և համաժողովրդական ճանաչում ձեռք բերած Թիֆլիսի պատվավոր քաղաքացի, «Ս. Ստանիսլավի» շքանշանի ասպետ, հիվանդանոց, հյուրանոցներ, կինո- թատրոն, մեծ թվով բնակելի շենքեր կառու- ցած, հայ մտավորականներին և կրթամշա- կութային հաստատություններին առատա- ձեռն աջակցած Մ. Արամյանցը վախճանվեց 1923-ին կամ 24-ին՝ լիակատար թշվառության մեջ, քանի որ խորհրդային իշխանությունները շատ այլ մեծահարուստների նման ամբողջովին ունեզրկել էին նրան³⁰:

²⁶ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթա- գրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 50:

²⁷ Տե՛ս Հարությունյան Ա., Միքայել Արամյանց. մարդ, որը կառուցեց Թիֆլիսը, բայց մահացավ այնտեղ սովի մատնված, SHANTNEWS.AM:

²⁸ Տե՛ս Հարությունյան Ա., Միքայել Արամյանց: Սովորա- կան մարդու անսովոր կյանքը, SHANTNEWS.AM:

²⁹ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթա- գրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 54:

³⁰ Տե՛ս Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր, կազմող և ծանոթա- գրությունների հեղինակ Խաչատուր Դադայան, Ե., 2011, էջ 9: